

**Ուժի մեջ է՝ 01.09.2020թ.**

**ԻՆԵԿՈ ՕՆԼԱՅՆ/ՄՈԲԱՅՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՔԱՐՏԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ**

Փոխանցում քարտին ծառայությունը հնարավորություն է տալիս Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից, Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից, Ինչպես նաև Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում կցված՝ ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից փոխանցումներ կատարել ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված ցանկացած վճարային քարտի:

**Փոխանցում քարտին ծառայության միջոցով կատարված գործարքների համար կիրառվում են հետևյալ սակագները՝**

<b>Գործառնություն</b>	<b>Սակագին</b>
Փոխանցում Ինեկոբանկի ընթացիկ դրամային հաշիվներից	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված դրամային վճարային քարտերից <sup>2</sup>	
Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին	0%
ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին	0.5%
Փոխանցում Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում կցված այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերից <sup>3</sup>	

<sup>1</sup> Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման և սպասարկման պայմաններն ու սակագները կարգավորվում են «Ինեկո օնլայն/մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ» փաստաթղթով:

<sup>2</sup> Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից լրացուցիչ գանձվում է տվյալ վճարային քարտի պայմաններով և սակագներով սահմանված քարտից քարտ/քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցումների համար սահմանված սակագինը:

<sup>3</sup> Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից թողարկող բանկի կողմից կարող են սահմանվել այլ վճարներ՝ համաձայն տվյալ քարտի սպասարկման պայմանների և սակագների:

<p>Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտին</p>	<ul style="list-style-type: none"> <li>• <b>Անվճար</b>, եթե օրացույցային ամսվա ընթացքում հաճախորդի կցված բոլոր քարտերով կատարված գործարքների հանրագումարը չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը<sup>4</sup>,</li> <li>• <b>1.5%</b><sup>4</sup> օրացույցային ամսվա ընթացքում հաճախորդի կցված բոլոր քարտերով կատարված գումարային 50,000 ՀՀ դրամը<sup>4</sup> գերազանցող գործարքների համար:</li> </ul>
<p>ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտին</p>	<p>1.5%</p>

### Այլ պայմաններ

1. Տվյալ ծառայության միջոցով փոխանցումները իրականացվում են ՀՀ դրամով:
2. Փոխանցող և/կամ ստացող քարտի արժույթը ՀՀ դրամից տարբեր լինելու դեպքում փոխարկումը կատարվում է համաձայն համապատասխանաբար փոխանցող և/կամ ստացող քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
3. Տվյալ ծառայության միջոցով կատարված փոխանցումների դեպքում փոխանցվող գումարը քարտին հասանելի է դառնում հաշված րոպեների ընթացքում:
4. Սույն փաստաթղթով սահմանված միջնորդավճարը գումարվում է գործարքի գումարին և գանձվում անմիջապես գործարքի ժամանակ:
5. Մեկ գործարքի առավելագույն գումար է սահմանվում 500,000 ՀՀ դրամը:

<sup>4</sup> Նշված սահմանաչափի հաշվարկի մեջ ներառվում են նաև հաճախորդի կցված բոլոր քարտերով կատարված «Ինեկո օնլայն/մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ» փաստաթղթով սահմանված *Փոխանցում իր հաշիվներին, Ներբանկային, ԻնեկոԸնկեր, ԻնեկոՓեյ* փոխանցումները: